

## ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ


- 1) Թողարկողի կանոնադրության պատճենը
- 2) Թողարկողի պետական գրանցման վկայականի պատճենը
- 3) Թողարկողի 19.06.2008թ. խորհրդի նիստի թիվ 06-19-01 արձանագրության պատճենը
- 4) Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացության պատճենները
- 5) «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ 16.05.2008թ. կնքված Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման թիվ IB/08-001 պայմանագրի պատճենը
- 6) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագրի պատճենը
- 7) Պետական տուրքի անդորրագիրը

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
«Էքսպրես Կրեդիտ Ունիվերսալ Վարկային  
Կազմակերպություն»  
փակ բաժնետիրական ընկերության  
բաժնենիւնտերի արտահերթ  
ժողովի կողմից  
«14» դեկտեմբերի 2004 թ.



Վարկային Կազմակերպության  
Վարչապետի նախագահի -  
Վահագնի Կոնյանի ստորագրում  
Վ. Կ. ԿՈՆՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է:  
Հայաստանի Հանրապետության  
Կենտրոնական բանկի կողմից  
Տպագրված է ընդամենը 3 օրինակ  
ՕՐԻՆԱԿ 3  
Գրանցման թիվ .....  
«36» ..... 2004 թ.



Կենտրոնական  
Բանկի նախագահի  
Ս. ԿՈՆՅԱՆ

«ԷԶՄՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Էքսպրես Կրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) հանդիսանում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող վարկային կազմակերպություն, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

1.2 Ընկերությունն իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում:

1.3 Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.4 Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

1.5 Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:

1.6 Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.7 Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրանցման պահից):

1.8 Ընկերությունը ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն), դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային և այլ նշանների ու ֆիրմային ռեկվիզիտներ:

1.9 Ընկերությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետև՝ Օրենսգիրք), «Վարկային կազմակերպությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետություն օրենքներով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) նորմատիվ իրավական ակտերով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ: Ընկերությունը հրապարակային օֆերտաների միջոցով չի ներգրավում փոխառություններ:

1.10 Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետություն օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.11 Եթե Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ է հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործունեությունը (անգործությունը), որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ Ընկերության գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություններ, ապա Ընկերությանը պատկանող գույքը չբավարարելու դեպքում այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ Ընկերության պարտավորությունների համար:

1.12 Սույն կանոնադրության 1.11 կետում նշված բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են իրենց այդ իրավունքը կամ հնարավորությունները Ընկերությանը որոշակի գործողություններ կատարել կամ չկատարել պարտադրելու նպատակով, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով Ընկերությունը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:

1.13 Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունն իր հերթին

պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.14 Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Էքսպրես Կրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն»  
փակ բաժնետիրական ընկերություն  
կրճատ՝ «Էքսպրես Կրեդիտ ՈւՎԿ» ՓԲԸ

ռուսերեն լրիվ՝ Акционерное Общество Закрытого Типа “Экспресс Кредит универсальная кредитная организация”|

կրճատ՝ АОЗТ“Экспресс Кредит УКО”|

անգլերեն լրիվ՝ «Express Credit universal credit organisation» Joint Stock Company  
կրճատ՝ «Express Credit UCO» JSC.

1.15 Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 375025, Չարենցի փողոց, շենք թիվ 58, բն. թիվ 1

1.16 Ընկերությունն ստեղծվում է առանց ժամկետի սահմանափակման:

1.17 Ընկերության հիմնադիր փաստաթուղթ սույն կանոնադրությունն է:

1.18 Սույն կանոնադրության պահանջները պարտադիր են Ընկերության բաժնետերերի և բոլոր մարմինների համար:

1.19 Սույն կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը կատարվում է ժողովի որոշմամբ, որն ընդունվում է դրան մասնակցած՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կամ անվանատերերի ձայների 3/4-ով, իսկ կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում՝ ժողովին մասնակցած՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կամ անվանատերերի ձայների մեծամասնությամբ կամ խորհրդի միաձայն որոշմամբ:

1.20 Ընկերությունը հանդիսանում է «Էքսպրես Կրեդիտ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը:

## 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Ընկերության ստեղծման նպատակն է վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը

## 3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Ընկերությունն իրավունք ունի «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

3.2 Ընկերության առանձնացված ստորաբաժանումների հիմնադրման մասին որոշումներն ընդունվում են Ընկերության տնօրենների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) կողմից:

3.3 Մասնաճյուղի և ներկայացուցչության ղեկավարները նշանակվում են Ընկերության կողմից և գործում են վերջինիս տված լիազորագրերի հիման վրա:

3.4 Մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործում են Ընկերության անունից: Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության համար պատասխանատվությունը կրում է Ընկերությունը:

## 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

4.1 Կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

4.2 Կանոնադրական կապիտալը որոշում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը:

4.3 Ընկերությունը կարող է ժողովի որոշմամբ փոփոխել կանոնադրական կապիտալի չափը: Կանոնադրական կապիտալի փոփոխման կարգը սահմանվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ:

4.4 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 155000000 (Հարյուր հիսուն հինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, որը բաժանված է 60000 (Վաթսուն հազար ) հատ սովորական և 2000 (Երկու հազար) հատ արտոնյալ բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 2500 (Երկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով :

## 5. ՀԱՍԱՐԱԿ (ՍՈՎՈՐԱԿԱՆ) ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԲԱԺՆԵՏԵՏԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

5.2 Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի և սույն կանոնադրության համաձայն իրավունք ունի՝ ա) մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) մասնակցել Ընկերության կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ՝ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.

դ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

ե) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով, ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին.

զ) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

է) հանդես գալ առաջարկություններով ժողովներում.

ը) ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

թ) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժ) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը.

ժա) ունենալ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

5.3 Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատիրոջը չի կարող տրամադրվել նրան պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք:

5.4 Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումներն Ընկերության կողմից չեն երաշխավորվում

5.5 Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսեր:

5.6 Ընկերության յուրաքանչյուր արտոնյալ բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

5.7 Յուրաքանչյուր արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվում է տարեկան 12 տոկոս շահաբաժին նրա նմանալ արժեքի նկատմամբ, իսկ այդ բաժնետոմսերի լուծարային արժեքը հավասար է նրանց նմանալ արժեքին:

5.8 Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերը չունեն ձայնի իրավունք ժողովում բացառությամբ սույն Կանոնադրության 5.9, 5.10 և 5.11 կետերով նախատեսված դեպքերի:

5.9 Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ժողովում ունեն ձայնի իրավունք, եթե քննարկվում են Ընկերության վերակազմակերպման կամ լուծարման հարցեր:

5.10 Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ժողովում ձեռք են բերում ձայնի իրավունք, եթե քննարկվում են կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները:

5.11 Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը, որոնց հասանելիք շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ, իրավունք ունեն ձայնի իրավունքով մասնակցել այն ժողովի բոլոր հարցերի քննարկմանը, որը հետևում է տարեկան այն ժողովին, որում չի ընդունվել որոշում՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարելու մասին, կամ ընդունվել է որոշում՝ դրանք չվճարելու կամ ոչլրիվ վճարելու մասին: Այդ իրավունքը դադարում է արտոնյալ բաժնետոմսերի դիմաց լրիվ ծավալով շահութաբաժինների առաջին վճարումից հետո:

5.12 Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժնի չվճարելը կարող է հիմք հանդիսանալ Ընկերությունը դատական կարգով լուծարելու համար:

5.13 Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերը պարտավոր են չիրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները: Գաղտնիք ներկայացնող տեղեկությունների ցանկը սահմանում է խորհուրդը:

5.14 Ընկերության բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման դեպքերում ընկերության բաժնետերերի շահերը ապահովվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածով սահմանված կարգով և պայմաններով:

## 6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՏԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

6.1 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ ժողով) Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

6.2 Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով:

6.3 Տարեկան ժողովը գումարվում է ոչ ուշ, քան Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

6.4 Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

6.5 Ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և կարգը, ինչպես նաև բաժնետերերին ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է խորհուրդը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

6.6 Ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը.

գ) Ընկերության լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը.

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է

քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) կանոնադրական կապիտալի փոփոխումը.

ը) Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

թ) Ընկերության վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգողի ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգողի ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգողի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

ժ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժա) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: ժբ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժգ) ժողովի վարման կարգի սահմանումը.

ժդ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժե) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժզ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

ժէ) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.

ժը) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում.

ժթ) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում.

ի) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.

իա) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.

իբ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.

իգ) հողի գալիս ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը.

իդ) հողի գալիս ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը.

իե) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

6.7 Սույն կանոնադրության 6.6 կետով սահմանված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել խորհրդին կամ գործադիր մարմնին, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

## 7. ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

7.1 Բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի ժողովում ձայնի իրավունքից օգտվում են Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը:

7.2 Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:

7.3 «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ միայն խորհրդի ներկայացմամբ:

7.4 «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ», «դ», «զ» և «ժթ» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

7.5 «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «զ» և «ը» ենթակետերում սահմանված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

7.6 Ժողովի վարման կարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է ժողովի հաստատած ներքին փաստաթղթերով:

7.7 Ժողովն իրավունք չունի փոփոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

7.8 Ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է ներկայացվեն Ընկերության բաժնետերերին «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

## 8. ԺՈՂՈՎԻՆ ՍԱՄՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8.1 Ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը)՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով, Ընկերության բաժնետեր չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, Ընկերության վերստուգողը, Ընկերության աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում):

8.2 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

8.3 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 60 օրից ավելի:

8.4 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով



տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

8.5 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և նրան պատկանող բաժնետոմսերի, ըստ դրանց տեսակների և դասերի մասին:

8.6 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին:

8.7 Ընկերության բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:

8.8 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված բաժնետերերի խախտված օրինական իրավունքները և շահերը վերականգնելու նպատակով:

Սույն կանոնադրության 8.1 կետում սահմանված անձինք ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ ծանուցվում են ժողովի գումարման մասին՝ նրանց համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու, իսկ ժողովի գումարման մասին որոշմամբ նախատեսված լինելու դեպքում՝ նաև այն հրապարակելու միջոցով:

8.9 Եթե Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրանցված անձն արժեթղթերի անվանատեր է, ապա ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է նրան: Վերջինս պարտավոր է ծանուցումն ուղարկել այն անձանց, որոնց շահերը նա ներկայացնում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ նրա և այդ անձանց միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում:

8.10 Ընկերության բաժնետերերը (բաժնետերերը), որը (որոնք) ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է (են) հանդիսանում, Ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել խորհրդի և վերստուգողի անդամության թեկնածուներ: Առաջարկվող թեկնածուների քանակը չի կարող գերազանցել այդ մարմիններում անդամների սահմանված քանակը:

8.11 Տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջարկման հիմքերը, հարցը մտցնող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի, և առաջարկության հեղինակի (հեղինակների) ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերարտադրությունը:

8.12 Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս, այդ թվում՝ ինքնաառաջադրման դեպքում, նշվում է թեկնածուի անունը, նրա Ընկերության բաժնետեր լինելու կամ չլինելու փաստը, նրան պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը՝ ըստ տեսակների և դասերի, նրան առաջադրող Ընկերության բաժնետերերի անունները (անվանումները), վերջիններիս պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը՝ ըստ տեսակների և դասերի:

8.13 Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք տարեկան ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին՝ սույն կանոնադրության 8.10 կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում: Խորհուրդը կարող է որոշում ընդունել ներկայացված առաջարկները տարեկան ժողովի օրակարգում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին միայն այն

դեպքում, երբ առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից խախտվել է սույն կանոնադրության 8.10 կետով սահմանված ժամկետը կամ առաջարկ ներկայացրած բաժնետերը (բաժնետերերը) չի (չեն) տնօրինում Ընկերության սույն կանոնադրության 8.10 կետով սահմանված քանակի քվեարկող բաժնետոմսերին կամ լրիվ չեն կամ բացակայում են սույն կանոնադրության 8.12 կետով սահմանված տվյալները կամ առաջարկը չի համապատասխանում «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին:

8.14 Խորհրդի հիմնավորված որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին, ուղարկվում է առաջարկը կամ թեկնածու ներկայացրած բաժնետիրոջը (բաժնետերերին)՝ որոշումն ընդունելու պահից 3 օրվա ընթացքում:

## 9. ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

9.1 Ժողովի նախապատրաստման ընթացքում խորհուրդը, իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերում՝ ժողովը գումարող անձինք, որոշում են՝

- ա) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
- բ) ժողովի օրակարգը.
- գ) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.
- դ) ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.
- ե) բաժնետերերին ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.
- զ) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

## 10. ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԸ

10.1 Արտահերթ ժողովը գումարվում է խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

10.2 Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով: Խորհուրդը չի կարող իր որոշմամբ փոխել ժողովի գումարման ձևը, եթե սույն կետում նշված արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջը ցուցում է բովանդակում ժողովի գումարման ձևի մասին:

10.3 Արտահերթ ժողովի՝ հեռակա կարգով քվեարկությամբ գումարման մասին խորհրդի որոշմամբ պետք է սահմանվեն՝

- ա) քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը.
- բ) Ընկերության բաժնետերերին՝ քվեաթերթիկները և բաժնետերերին տրամադրվող տեղեկությունները և նյութերը առաքելու տարին, ամիսը, ամսաթիվը.
- գ) բաժնետերերի կողմից լրացված քվեաթերթիկներն Ընկերության կողմից ընդունելու վերջին ժամկետի տարին, ամիսը, ամսաթիվը:

10.4 Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջի առկայության դեպքում խորհուրդը պետք է արտահերթ ժողովը գումարի պահանջը ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում:

10.5 Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջում պետք է ձևակերպված լինեն այն հարցերը, որոնք առաջարկվում են ընդգրկել ժողովի օրակարգում և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը:

10.6 Խորհուրդն իրավունք չունի փոփոխություններ մտցնել Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից առաջարկվող օրակարգում, ինչպես նաև փոփոխել օրակարգի քննարկման ենթակա հարցերի առաջարկվող ձևակերպումները, բացառությամբ այն դեպքի, երբ առաջարկվող օրակարգի հարցերը «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ժողովի իրավասության առարկա:

10.7 Եթե արտահերթ ժողով գումարելու պահանջը ներկայացվում է Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից, ապա այն պետք է պարունակի պահանջը ներկայացնող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի:

Արտահերթ ժողով գումարելու պահանջը պետք է ստորագրված լինի ժողովը գումարելու պահանջ ներկայացրած անձի (անձանց) կողմից:

10.8. Արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին խորհրդի որոշումը պետք է ընդունվի Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջը ներկայացնելու ամսաթվից՝ 10 օրվա ընթացքում:

Խորհուրդն արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին որոշում կարող է ընդունել միայն «բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով սահմանված դեպքերում:

## 11. ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԺՈՂՈՎՈՒՄ

11.1 Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:

11.2 Բաժնետերն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել իր լիազոր ներկայացուցչին կամ անձամբ մասնակցել ժողովին:

11.3 Ժողովում բաժնետիրոջ ներկայացուցիչը գործում է գրավոր ձևով կազմված լիազորագրի հիման վրա:

11.4 Եթե Ընկերության բաժնետոմսերը փոխանցվել են ժողովում մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվանից, ամսից, ամսաթվից հետո, բայց մինչև ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ապա նշված ցուցակում ընդգրկված բաժնետերը պարտավոր է իրենից բաժնետոմսեր ձեռք բերած անձանց տրամադրել քվեարկելու լիազորագիր կամ ժողովում քվեարկել բաժնետոմսերի նոր սեփականատիրոջ ցուցումներին համաձայն: Նշված կարգը կիրառվում է նաև բաժնետոմսի յուրաքայտուր հաջորդ փոխանցումների ժամանակ:

11.5 Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

11.6 Եթե ժողովը տևում է մեկ օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար իրականացվում է ժողովի մասնակիցների գրանցում:

11.7. Եթե Ընկերության բաժնետերերին «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով քվեաթերթիկներ են ուղարկվել, ապա քվորումի հաշվարկման և քվեարկության արդյունքների ամփոփման համար Ընկերության կողմից հաշվի են առնվում նաև մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին ստացված քվեաթերթիկներով տրամադրվող ձայները:

11.8 Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

11.9 Չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

11.10 Ընկերության բաժնետերերի ծանուցումը նոր ժողովի գումարման մասին կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով, իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում՝ ժողովի գումարման օրվանից առնվազն 10 օր առաջ:

11.11 Եթե քվորումի բացակայության պատճառով չկայացած ժողովի գումարման ամսաթիվը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա այդ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում:

11.12 Քվեարկությունը ժողովում իրականացվում է «Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով նախատեսված դեպքերի:

## 12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

12.1 Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

12.2 Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

բ) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի.

գ) ժողովների օրակարգի հաստատումը.

դ) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի X գլխի դրույթներին համապատասխան.

ե) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.

զ) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.

է) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.

ը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

թ) Ընկերության վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

ժ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

Ճա) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

ժբ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամսյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

ժգ) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժդ) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ժե) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

ժզ) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

ժէ) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում.

ժը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.

ժթ) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

ի) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

իա) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

12.3 Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

12.4 Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:

12.5 Ժողովը կարող է որոշում ընդունել խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

12.6 Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերապահվում է նաև անվանատերերին:

12.7 Խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները:

12.8 Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Ընկերության վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի պահանջով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է ժողովի հաստատած՝ խորհրդի կանոնակարգով: Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) ընդունել որոշումներ:

12.9 Խորհրդի նիստում քվորումն ապահովված է համարվում խորհրդի կազմում մտնող անփանց 2/3 ներկայության դեպքում:

12.10 Խորհրդի որոշումներն ընդունվում են միատին ներկա խորհրդի անդամների ձայների 2/3-ով: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Չայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում:

12.11 Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

### 13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

13.1 Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է Ընկերության գործադիր մարմնի՝ Ընկերության գործադիր տնօրենի կողմից:

13.2 Ընկերության գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ «բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույնկանոնադրությամբ ժողովի և խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:

13.3 Ընկերության գործադիր մարմինը կազմակերպում է ժողովի և խորհրդի որոշումների կատարումը:

13.4 Ընկերության գործադիր մարմինների ձևավորումը և դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է ժողովի որոշմամբ:

13.5 Ընկերության գործադիր տնօրենը՝

ա) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.

բ) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

գ) գործում է առանց լիազորագրի.

դ) տալիս է լիազորագրեր.

ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

զ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.

է) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.

ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

### 14. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

14.1 Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի ճափով:

14.2 Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

14.3 Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

## 15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ

15.1 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ժողովն ընտրում է Ընկերության վերստուգողին:

15.2 Վերստուգող վերստուգողի իրավասությունները և ստուգումների անցկացման կարգը սահմանվում են «բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ:

15.3 Վերստուգողը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներիին և այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը:

15.4 Վերստուգողը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև ժողովի կողմից հաստատված ներքին փաստաթղթով՝ վերստուգողի աշխատանքի կանոնակարգով:

15.5 Վերստուգողը իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

15.6 Վերստուգողը իրավունք ունի պահանջել արտահերթ ժողովի գումարում՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածին համապատասխան:

15.7 Վերստուգողի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

15.8 Վերստուգողին ընտրում է ժողովը՝ 3 տարի ժամկետով:

15.9 Վերստուգողը հաշվետու է ժողովին:

15.10 Վերստուգողի վարձատրության և (կամ) ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են ժողովի որոշմամբ:

## 16. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԸ

16.1 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը ներգրավում է աուդիտ իրականացնող կազմակերպություն, որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

16.2 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն աուդիտորի կողմից կարող է իրականացվել նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետերերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:

16.3 Ընկերության աուդիտն իրականացնող անձին հաստատում է ժողովը: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է խորհրդի նախագահը: Խորհուրդը որոշում է աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարի չափը:

**17. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ ԵՎ ԱՌԻԳԻՏ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ  
ԱՆՁԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

17.1 Վերստուգողը կամ Ընկերության աուդիտն իրականացնող անձը Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ, որոնք պետք է պարունակեն՝

ա) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը.

բ) Ընկերության հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերլուծությունը.

գ) Ընկերության հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիության հաստատումը.

դ) Ընկերության կառավարման մարմինների որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվության համապատասխանության հաստատումը գործող օրենքներին և այլ իրավական ակտերին.

ե) ստուգման առանձնահատկությունների հետ կապված այլ տեղեկատվություններ:

17.2 Վերստուգողը Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգողի եզրակացությունը պարտադիր է:

**18. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

18.1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերությունը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն:


18.2 Ընկերության գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված Կենտրոնական բանկին և պետական կառավարման այլ մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և կանոնադրությանը համապատասխան:

18.3 Տարեկան ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, տարեկան հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության վերստուգողի եզրակացությամբ: Նշված փաստաթղթերը հրապարակելուց առաջ, պետք է ստուգվեն և դրանց հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության և Ընկերության բաժնետերերի հետ ընդհանուր գույքային շահեր չունեցող աուդիտն իրականացնող անձի կողմից:

18.4 Ընկերության տարեկան հաշվետվությունը ենթակա է նախնական հաստատման խորհրդի կողմից՝ տարեկան ժողովի գումարման ամսաթվից առնվազն 30 օր առաջ:




ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
«Էքսպրես Կրեդիտ ունիվերսալ վարկային  
կազմակերպություն»  
փակ բաժնետիրական ընկերության  
աշխատանքների արտահերթ  
ժողովի կողմից



մարտի 2008 թ.

Գրառույթի նախագահ -  
Յուրայրի տնօրեն՝  
ԱՐՁՈՒՄՆԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է  
Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի կողմից  
Տպագրված է ընդամենը 3 օրինակ  
ՕՐԻՆԱԿ 3  
գրանցման թիվ ... 1 ...



մարտի 2008 թ.

Գրառույթի նախագահ -  
Յուրայրի տնօրեն՝  
ԱՐՁՈՒՄՆԱՆ

«ԷԸՍՊՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կանոնադրության 1.9 կետից հանել վերջին նախադասությունը՝  
«Ընկերությունը հրապարակային օֆերտաների միջոցով չի ներգրավում  
փոխառություններ»:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է  
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի  
11.02.2003թ. թիվ 58 որոշմամբ  
Փոփոխություն է կատարվել ՀՀ կենտրոնական բանկի  
նախագահի 21.05.2004թ. թիվ 1/233Ա որոշմամբ

### ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ թիվ 1

Համաձայն «Վարկային կազմակերպությունների  
մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական  
բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների,  
սույն վկայականը տրվում է

**«Էքսպրես Կրեդիտ ունիվերսալ  
վարկային կազմակերպություն»  
փակ բաժնետիրական ընկերությանը**

ք. Երևան, Չարենցի փողոց, շենք թիվ 58, բն. թիվ 1  
Գրանցման համարը 1  
Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ 11.02.2003թ.



Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ

*S. Մարգարյան*  
S. Մարգարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՉԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

ԵՐԵՎԱՆ



ԿՐԿՆԱԿԻ ՏՐՎԱԾ 09.12.97թ

01U039099-ի ՓՈՒԱՐՈՆ

U

Հաստատված է  
ՀՀ կառավարության 1999 թվականի  
փետրվարի 2-ի N 53 որոշմամբ

ՎԿԱՅԱԿԱՆ

02 ս.№ 049325 \*

Իրավաբանական անձի պետական գրանցման

, , Օ Ի Ն Ա Բ , ,

(անվանումը)

Փակ բաժնետիրական ընկերություն

գրանցված է իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում

264.120.04041

Գրանցման համարը

09.12.97թ

Գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը

37394471

Իրավաբանական անձի ծածկագիրը

Իրավաբանական անձի տեսակը

Հ ա լ ա թ ա յ ի ն

Վկայակոչում է անցնում Կոտայքի հետ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

*[Handwritten signature]*

(ստորագրություն)

4.S. 30. դեկտեմբերի 2000 199 թ.

Վ Ե Ր Ա Ն Ի Մ Թ Ը

Հրահանգում անգլիկանական գրառումը (հրահանգ)

028049225

Հիմնում

Հիմնում

գն քանակությունը անկողնային

Տեղից (տեղ) Թվում: 575010, Երևան, Ալյանի 74-10

Տարածության հիմնական տեսակներ

Համարներ

1. Մշակույթի ոչ կրթական գրքատեսակներ 7499

2. Քրեական գրքատեսակներ/ոչ կրթ./ 7414

3. Գրքային արձանագրություններ 5122, 5211

4. Կանխավճար անարժ. 5141, 5050

5. Բնագրային արձանագրություններ 51391, 51396, 5235

6. Հրատարակչական գրքատեսակներ 2211

Այլ տեղեկություններ

Ներդրում ունի մեծ կապիտալի հետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

30. 2000 թ.



Ն Ծ Ր Ա Ը Ր Կ 082

Համարանիշի անդրադարձում գրանցում (կրթական)

Պատվագիր 020045925

Ստանդարտ Հ. Բ. Ա. Մ. Մ.

ՀՀ ԲՈՒՆԱԿԱՐԱԿԱՆ ԳԱՎՈՐՈՒՄ

Պատվագրի դասը (տեսքով) 2

Պատվագրի նիստերի անունները ամսագրեր

1 ՈՐԱՎՈՐԱԿԱՆ Ե ՏՐՈՒՄԱԿԱՆ ԱՆՈՒՆԳ ԿՐԹԱԿՈՒ

2 ՎՈՐԱԿՐՄ/ՔՐԻՏԻՑԻՆԻ ԵՐԱՄԱՐՈՒՄ 6599

3

4

5

6

Այլ տեղեկություններ ԳՐԱԿՐՄԱՆ ԵՄՄԱՆ ԱՎՆԱՑՈՒՄ

15.09.99

Երրորդ ստորագրողի անունը (կրթական)

ԱՄԱՍՏԻ ԿՐՄԱՆՈՒՄԻ ՍՏՄԱՆ

ՄԱՐԿՈՍ ՈՅՑՅՈՒՆ

(տեղեկություն)

30. ԳՆԻՔԱՎԱՆՈՒՄ 2000 թ.





ՀՀ ՄԱՍԻՎԱԿՈՆՍՏՐԱԿՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԵՐԵՎԱՆ 14-ԵՆ 31-ՎԱՅՄԱՆԱԿ

ԼՆԲԳԻԻ 003

Իրավաբանական անձի ստեղծման գրանցման վկայական

Քանոնագրի համար 020049325

Ստեղծման օր 22.03.2009

Ստեղծման օրվա ժամը 12:00:00

Գրանցման վայրը Երևան

Այլ տեղեկություններ ՀԱՄԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՋԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՋԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ

11.03.2009

Երևանի քաղաքի Լ. Մարտիրոսյանի թիվ



ՀԱՄԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՋԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՋԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ

Գրանցման կատարող  
*Արմենակ Բաբայան*

(ստորագրություն)

30 դեկտեմբեր 2009

Հանրապետության Կենտրոնական ընտրական կոմիտեի 14-րդ ՆՇԿՏ-ի որոշում

ԵՐԵՎԱՆ 004

Իրավաբանական անձի անունով գրանցված միջանկյալ

Պարտիան 020049225

Միջանկյալ Ն.Ն.Ս.Ս.Բ.Բ.

ԿԵԿ ԲԱՆՆԱԳՐԱԿԱՆ ԳՆԻՅՈՒՄՆԵՐԸ

Գրանցված անունը

Այլ անուններով չափանշաններով և չափանշաններով չափանշաններով

ՆԱԽԱՐԱՐՄԱՆ, ԳՆԱԳՐԱԿԱՆ ԿԱԳՆԱԿ ԹԻՖԻՆԻՆԻ

ՍՈՒՆ 16.11.99թ

Անդամ անձի անունը

ԿԱՌԱՍԱՐՆԻ ԿԱՌԱՍԱՐՆԻ

ԿԱՌԱՍԱՐՆԻ ԿԱՌԱՍԱՐՆԻ

ԿԱՌԱՍԱՐՆԻ ԿԱՌԱՍԱՐՆԻ



30. ԴԵԿՏԵՄԲԵՐ 2009 թ

Հասցեական  
ՀՀ Կոմիտասի 2000 թվականի  
հունիսի 14-ի N 315 քրեական

ԱՆՈՒՄ **003**

Իրավաբանական անձի պետական գրանցման վկայական

Վարչական **020049326**

Ստանդարտ **Հ. Ռ. Ն. Ա. Ս. Ս.**

ՓԱԿ **Կոմիտասի պետական գրանցման կենտրոն**

Քաղաքի և մարզի (հասցեն)

Միջնորդություն **ՀԱՐՔԱՆՈՒՄԻՑՆԻ ՏԱՍԱԿՆԵՐԻ**

**ՎԵՐ ԳՈՒՄԱՆ ՏՅՈՒ 30.12.2000Գ**

Անդամի անձի մեջ է պետական հետ



ՊՅՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՈՒՆՏՐԱՅԱՆ

Պ. ՏԱԿԱՆԻ ԴԵՐՄԱՆԻՍԻ  
*(Handwritten signature)*


(Ամրագրողը)

ՏՅՈՒ **30** ԿՈՄԻՏԱՍԻ **200** Գ



Կրթության և գիտության նախարարություն  
ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ՀՀ կրթության և գիտության նախարարություն  
ՀՀ կրթության և գիտության նախարարություն



ՆԵՐՆԻ 006

Հանձնարարական ամսագրի համարը

Անվանումը ~~024 04 9325~~ 024 04 9325

Մեկնությունը ~~ՆԻԱՐ~~ ՆԻԱՐ

Վանկ ԳԱՆՆԵՐՈՒԹՅԱՆ ԲԵՆԵՐՈՒՄԻՆ

Կանգնող վայրը (նաստեղ)

Z

Նյութի տեսակը ~~ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅԱՆ, Հ. ԽՐԱՄԻ ԻՐԱՆԵՐԻ~~

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

22.10.2001թ.

Ներդրում ունի մեջ է վկայականի հետ




ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

*Ch. L...*  
Կրթության և գիտության նախարարություն

23. ԳՈՒԿԱՆՔԻ ԵՐ 2001 Ք.



1. 10. 2002. 10. 2002.



10. 2002.

10. 2002.

10. 2002.

10. 2002.

10. 2002.

10. 2002.

10. 2002.

10. 2002.

10. 2002.

10. 2002.


10. 2002.

10. 2002.


10. 2002.

10. 2002.

10. 2002.



10. 2002.




REPUBLIC OF INDONESIA  
MINISTRY OF HEALTH

Surat Keterangan  
No. SK/100/19925

Di bawah ini terdapat nama-nama  
yang telah dinyatakan sembuh

2  
No. Pendaftaran: 172005  
Dipulihkan: 17.02.02

2  
No. Pendaftaran: 15.02.02



KESTIBAN NGURUSI  
*[Signature]*  
17.02.02

№ 001

№ 001

№ 001

№ 001

№ 001

№ 001

№ 001

№ 001


№ 001

№ 001

№ 001

№ 001

№ 001



№ 001

№ 001

№ 001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԲԱՆԿԻ ԿՈՄԻՏԵ

ՆՈՒՄԵՐ 012

Խառնուրդային ֆոնդի արժեքային թղթերի վաճառքի

Արժեքը 024 049325

Անվանումը Հիստորիա Կրկնային

ֆոնդի ֆուկսիոնարի

բեկնային

Գումարը ըստ օրենքի

2

Այս օրենքի մասին կանոնադրությունը և կանոն

առարկությունը կարելի է տեսնել հարկային կենտրոնի

Գրքային ծախսերի գրքի մասին օրենքի

Արդյունքները, ըստ ԱԲ 026 2022


փոխարժեքի 03.12.96թ. 011 հ/հ կարգի վրայ

Վարչական թիվը և վարչական համարը 17 3թ Գր 5 08 01 03թ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

*Մարտիրոսյան*  
Խառնուրդային

ՕԲ. համալսարան 100 21





« 19 » հունիսի 2008թ.

ք. Երևան

2008թ. հունիսի 19-ին, Երևանի ժամանակով ժամը 15:00-ին, ք. Երևան Չարենցի 58, բն. 1 հասցեում տեղի ունեցավ «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ խորհրդի նիստը:  
Նիստին մասնակցում էին «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի Խորհրդի նախագահ Արմեն Արզումանյանը, Խորհրդի անդամներ Արթուր Ծատուրյանը և Ռուզաննա Սահակյանը:

**ՕՐԱԿԱՐԳ**


1. «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին հարցի քննարկում և հաստատում:

Օրակարգում ընդգրկված հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Ընկերության խորհրդի նախագահ և գործադիր տնօրեն Արմեն Արզումանյանը:  
Կարևորելով Ընկերության գործունեության ընդլայնման նպատակով ֆինանսական միջոցների հավաքագրման անհրաժեշտությունը և հաշվի առնելով, որ ներկայումս կորպորատիվ պարտատոմսերի շուկան հնարավորություն է տալիս Ընկերությանը մատչելի ֆինանսական ռեսուրսներ հավաքագրել՝ պարտ Արզումանյանը նշեց, որ ներկայումս նպատակահարմար է համարում Ընկերության կողմից թողարկել և տեղաբաշխել 150 մլն դրամ ծավալով պարտատոմսեր: Նշված գործընթացը կարելի է իրականացնել պարտատոմսերի բավարար գրավչության ապահովման դեպքում, հատկապես այն պարագայում, որ ֆիզիկական անձանց թույլատրվել է Ընկերության կողմից թողարկվող պարտատոմսերում մերցումներ կատարել: Այնին, նա տեղեկացրեց, որ նշված գործընթացն առավել պրոֆեսիոնալ կերպով կազմակերպելու համար Ընկերությունը 16.05.2008թ.-ին պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման մասին պայմանագիր է կնքել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ, որի հետ ակտիվ համագործակցությունը կիրականացվի Ընկերության խորհրդի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշում կայացնելուց հետո:  
Պարոն Արզումանյանը ներկայացրեց նաև թողարկման ենթակա պարտատոմսերի էական պայմանները և գործողությունների իմաստական քայլերը:

Հինք ընդունելով «Քաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40 հոդվածի 1-ին մասով և 84 հոդվածի 1-ին կետի է) ենթակետով, «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 6-րդ կետի, ինչպես նաև Ընկերության կանոնադրության 12.2 կետի գ) հնթակետով սահմանված պահանջները՝ խորհրդի կողմից

**ՈՐՈՇՎԵՑ**


1. Թողարկել 150 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով անվանական արժեկտրոնային պարտատոմսեր, որոնք ենթակա են տեղաբաշխման 1 տրանշով:
2. Հաստատել պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման, այդ թվում՝ արժեկտրոնների (տոկոսագումարների) վճարման պայմանները՝ համաձայն Հավելվածի (կցվում է):
3. Համաձայնել Ընկերության գործադիր տնօրեն Արմեն Արզումանյանին կազմակերպել պարտատոմսերի տեղաբաշխման նախապատրաստական աշխատանքները, մասնավորապես՝ ազդագրի կազմման և մարկետինգային աշխատանքների իրականացման նպատակով համագործակցել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ, պարտատոմսերի սննդականատիների տեստերի վարման պայմանագիր կնքել «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հետ, ինչպես նաև ձեռնարկել պարտատոմսերի թողարկմանն ու տեղաբաշխմանն առնչվող այլ անհրաժեշտ գործողությունները:



Նախագահ՝  
 Նախագահ՝  
 Անդամ՝  
 Անդամ՝  
 Անդամ՝

*(Handwritten signatures)*

Արմեն Արզումանյան  
 Արթուր Ծատուրյան  
 Ռուզաննա Սահակյան  
 Բելա Հովհաննիսյան



«Էքսպրես Կրեդիտ ՈւՎԿ» ՓԲԸ  
 հունիսի 19-ի  
 թիվ 96-Ս-01 որոշման  
 ՀԱՎԵԼՎԱԾ

**«ԷՔՍՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ ՈՒՆԻՎԵՐՍԱԿԱՆ ԱՎՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԵՐՈՒԹՅՈՒՆ»**

**ՊԱՐՏԱՏՈՍՄԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՏԵՂԱՔԱՇԽՄԱՆ, ԵՐՋԱՆԱԾՈՒՄԻ ԵՎ ՍԱՐՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. «Էքսպրես Կրեդիտ ՈւՎԿ» ՓԲԸ-ն (այսուհետ մասն` Ընկերություն) սույնով՝
  - 1.1.1. սահմանում է իր կողմից թողարկվող պարտատոմսերի թողարկման, տեղաքաշման, շրջանառության և մարման սպասարկման պայմանները՝ հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, Ընկերության կանոնադրության պահանջները,
  - 1.1.2. կանոնակարգում է պարտատոմսերի թողարկման, տեղաքաշման, շրջանառության և մարման սպասարկման առնչությամբ առկա փոխհարաբերությունները:

**2. ՊԱՐՏԱՏՈՍՄԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 2.1. Թողարկվող պարտատոմսերի թողարկման պայմաններն են՝
  - 2.1.1. Պարտատոմսերի դասն՝ **անվանական արժեկտրոնային պարտատոմս**,
  - 2.1.2. Պարտատոմսերի ձևը՝ **աչ փաստաթղթային**,
  - 2.1.3. Պարտատոմսերը հանդիսանում են **առանց սպահովման պարտատոմսեր**,
  - 2.1.4. Պարտատոմսերը փոխարկելի չեն, Ընկերությանը և պարտատոմսերի սեփականատիրոջը չեն տալիս վաղաժամկետ մարման իրավունք,
  - 2.1.5. Թողարկման ընդհանուր ծավալը՝ **150,000,000 ՀՀ դրամ**,
  - 2.1.6. Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ **25,000 ՀՀ դրամ**,
  - 2.1.7. Տեղաքաշման ենթակա ընդհանուր քանակը՝ **6,000 հատ**,
  - 2.1.8. Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ **18 ամիս**,
  - 2.1.9. Երջանառության ձևը՝ **ազատ շրջանառության իրավունքով**:
  - 2.1.10. Պարտատոմսերի արժեկտրոնի եկամտաբերության տարեկան տոկոսադրույքը՝ **12%**,
  - 2.1.11. Արժեկտրոնները վճարվում են **կիսամյակային պարբերականությամբ**,
  - 2.1.12. Պարտատոմսերի թողարկման նպատակը՝ **Ընկերության կողմից վարկերի տրամադրման նպատակով ռեսուրսների համալրում**:
  - 2.1.13. Պարտատոմսերի թողարկման և պարտատոմսերի ձեռք բերման սահմանափակումներ չեն նախատեսվում:
  - 2.1.14. Պարտատոմսերի ձեռքբերմամբ դրա սեփականատերը ստանձնում է հետևյալ իրավունքներն ու պարտավորությունները.
    - Որպես իրավունք՝*
    - ա) Սույն պայմաններով սահմանված ժամկետներում ստանալ պարտատոմսի արժեկտրոնները և անվանական արժեքը:
    - բ) Ընկերության կողմից պարտատոմսերի մարման գումարը սույն պայմաններով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ստանալ սույն պայմաններով սահմանված տույժերը:
    - գ) Ընկերության կողմից պարտատոմսերի մարման գումարը սույն պայմաններով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի



- սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ:
- դ) Ընկերության կողմից պարտատոմսերի մարման գումարը սույն պայմաններով սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով (սնանկ ճանաչվելու արդյունքում) դատական կարգով լուծարման դեպքում օգտվել օրենքով պարտատիրոջ իրեն վերապահված իրավունքներից:
- ե) Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը կարգավորված շուկայում (ֆոնդային բորսայում ցուցակված լինելու դեպքում) կամ դրանից դուրս՝ օրենքով սահմանված կարգով:
- զ) Օրենքով և սույն պայմաններով նախատեսված այլ իրավունքներ:

*Որպես պարտավորություն՝*

- ա) Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում կամ այլ պահառուի մոտ բացել արժեթղթերի (դեպո) հաշիվ:
- բ) Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը որևէ բանկում բացել բանկային հաշիվ:
- գ) Կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն:

2.1.15. Պարտատոմսերի թողարկմամբ և տեղաբաշխմամբ Ընկերությունը ստանձնում է հետևյալ իրավունքներն ու պարտավորությունները.

*Որպես իրավունք՝*

- ա) Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո օգտագործել պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցները՝ սույն պայմանների 2.1.12. կետով նշված նպատակների համար:

*Որպես պարտավորություն՝*

- ա) սույն պայմաններով սահմանված ժամկետում կատարել պարտատոմսերի արժեկտորների վճարումը և պարտատոմսի անվանական արժեքի վճարում.
- բ) օրենքից և պարտատոմսերի թողարկման պայմաններից բխող այլ պարտավորություններ:

2.1.16. Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը կիրականացվի ՀԿԳ-ի միջոցով՝ իր կանոններով սահմանված կարգով: Սակայն պարտատոմսերը կարող են հաշվառվել այլ պահառուի կողմից՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ համար արժեթղթերի (դեպո) հաշիվ բացելու և վարելու միջոցով:

2.1.17. Պարտատոմսերի դիմաց ստացված եկամուտի հարկումն իրականացվում է՝  
 ⇒ ֆիզիկական անձանց համար՝ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով,  
 ⇒ իրավաբանական անձանց դեպքում՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

2.2. Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման նպատակով Ընկերությունը և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Բանկ) 16.05.2008թ. կնքել են թիվ IB-08/001 պայմանագիրը, համաձայն որի Բանկը.

- (ա) պարտատոմսերի տեղաբաշխման նպատակով նախապատրաստում է արժեթղթերի ազդագիրը,
- (բ) պարտատոմսերի տեղաբաշխման գրավչության ապահովման նպատակով Ընկերության հետ համատեղ իրականացնում է մարքեթինգային աշխատանքներ (գովազդային ակցիաներ, պոտենցիալ ներդրողների հետ հանդիպումներ և այլն),
- (գ) կազմակերպում է տեղաբաշխումը և կարող է նախաձեռնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում այլ տեղաբաշխողների մասնակցությանն ուղղված աշխատանքներ (տեղաբաշխողների խմբի ստեղծման նպատակով կնքել համապատասխան պայմանագիր),
- (դ) մատուցում է հաշվարկային ծառայություններ և երկրորդային շուկայում կազմակերպում է պարտադիր գնանշումներ:

**3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ**

- 3.1. Պարտատոմսերը տեղաբաշխվում են հրապարակային եղանակով:
- 3.2. Պարտատոմսերը տեղաբաշխվում են 1 տրանշով:



- 3.3. Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսվում է պարտատոմսերի ազդագրի գրանցման օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրը և տևում 10 աշխատանքային օր
- 3.4. Պարտատոմսերի տեղաբաշխումը Բանկի կողմից իրականացվում է երաշխավորված եղանակով (նախապես գնելու կամ բաժանորդագրություն կազմակերպելու դեպքում չվճարված պարտատոմսերը գնելու պայմանով),
- 3.5. Պարտատոմսերի տեղաբաշխմանը կարող է մասնակցել այլ տեղաբաշխող (Բանկի և տվյալ տեղաբաշխողի միջև համապատասխան պայմանագիր կնքելու միջոցով):
- 3.6. Բաժանորդագրության միջոցով պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Բանկի կողմից սահմանված կարգով, որում սահմանվում է ներդրողների կողմից պարտատոմսի ձեռք բերման հայտի ձևը, դրա ներկայացման, բավարարման և հետկանչման կարգը, հայտի ներկայացման ժամկետները, վայրը և այլն:
- 3.7. Պարտատոմսերի դիմաց վճարումները կատարվում են ՀՀ դրամով անկանխիկ ձևով (պարտատոմսերի բաժանորդագրության ընթացքում ֆիզիկական անձանց համար կարող է նախատեսվել նաև կանխիկ վճարման հնարավորություն):
- 3.8. Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսերի փաստացի առաջնային օտարումը (պարտատոմսերի փոխանցումն) իրականացվում է Բանկի կողմից Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիային Ընկերության թողարկման հաշվից պարտատոմսերի փոխանցման հանձնարարականների տրման հիման վրա: Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիային Պարտատոմսերի փոխանցման հանձնարարականները տրվում են պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի փոխանցման օրը:
- 3.9. Տեղաբաշխումն օրենքով սահմանված դեպքերում չեղյալ ճանաչվելու դեպքում ներդրողների գումարները Բանկը վերադարձնում է տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով՝ պարտատոմսերի ձեռք բերման հայտերում (պայմանագրերում) ներդրողների կողմից նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:
- 3.10. Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսերի ձեռք բերմամբ ներդրողը տալիս է սույն պայմաններն ընդունելու իր համաձայնությունը:
- 3.11. Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$P = \frac{N}{(1+t \cdot R/m)} * \left\{ c * \sum \frac{1}{(1+R)^{j-1}} + \frac{1}{(1+R)^{n-1}} \right\}$$

որտեղ՝

- P – պարտատոմսի հաշվարկված (տեղաբաշխման) գինն է,
- N – պարտատոմսի անվանական արժեքն է,
- R – պարտատոմսի ներդրումային եկամտաբերության կիսամյակային տոկոսադրույքն է, տեղաբաշխման ընթացքում պարտատոմսերի ներդրումային եկամտաբերությունը հաշվարկվում է կիսամյակային արժեկտրոնային տոկոսադրույքի չափով,
- t – մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,
- m – ընթացիկ կիսամյակում ընդգրկված օրերի քանակն է,
- c – կիսամյակային վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,
- n – մնացած արժեկտրոնների վճարումների քանակն է, ընդ որում՝ n արժեքը պարտատոմսի շրջանառության ընթացքում փոփոխվում է ըստ նվազման, այսինքն՝ 3-1 միջակայքում,
- j – արժեկտրոնի հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում՝ j արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-n արժեքները (երբ n-ը ընդունում է 1 արժեք, j-ն նույնպես ընդունում է 1 արժեքը):

- 3.12. Տեղաբաշխման արդյունքում պարտատոմսեր ձեռք բերած ներդրողը (այդ թվում՝ տեղաբաշխողները) կարող են պարտատոմսերի ձեռք բերման գործարքների վերաբերյալ հաշվետվություն ստանալ Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայից և այլ պահառուներից՝ վերջիններիս կանոններով սահմանված կարգով:

#### 4. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

- 4.1. Երկրորդային շուկայում պարտատոմսերի շրջանառությունը (պարտատոմսերով գործարքների կատարումը) կազմակերպվում է Հայաստանի ֆոնդային բորսայում (այսուհետև՝ ՀՖԲ)՝ վերջինիս կանոններով սահմանված կարգով, իսկ մինչև պարտատոմսերի ՀՖԲ-ի առևտրին թույլատվության



ստացումը և դրանից հետո պարտատոմսերը կարող են շրջանառվել արտաբորսայում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

- 4.2. Բանկը, 16.05.2008թ. կնքված թիվ IB-08/001 պայմանագրի համաձայն, պետք է՝
  - ա) Ընկերությանը աջակցի պարտատոմսերը ՀՖԲ-ի առևտրին թույլատվություն ստանալու գործընթացի կազմակերպման ուղղությամբ,
  - բ) ՀՖԲ-ում իրականացնի պարտադիր գնանշումներ, որոնք պետք է նպատակաուղղված լինեն շուկայում պարտատոմսերի իրացվելիության ապահովմանը, ինչպես նաև պարտատոմսերի կայուն և հիմնավորված գների ձևավորմանը՝ հաշվի առնելով շուկայում ձևավորված իրավիճակը: Բանկն իրավունք ունի պարտադիր գնանշումներ կազմակերպել արտաբորսայում՝ իր տրամադրության տակ եղած տեղեկատվական համակարգերի միջոցով նույնիսկ մինչև պարտատոմսերի՝ ՀՖԲ-ի առևտրին թույլատվության ստացումը, եթե դա չի հակասում ՀՀ օրենսդրության պահանջներին:
- 4.3. Պարտատոմսերի երկրորդային շուկայում պարտատոմսեր ձեռք բերող անձը ձեռք բերմամբ (առուվաճառքի գործարքի կնքմամբ) տալիս է սույն պայմաններն ընդունելու իր համաձայնությունը:

## 5. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԵՎ ԱՐԺԵԿՏՐՈՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՍՊԱՍԱԲԿՈՒՄԸ

### 5.1. Պարտատոմսերի մարումը

- 5.1.1. Պարտատոմսերը մարվում են տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 18-րդ ամսվա համապատասխան օրվա ընթացքում (եթե նշված օրը աշխատանքային օր չէ, ապա դրան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում):
- 5.1.2. Պարտատոմսերը մարվում են ՀՀ դրամով և անվանական արժեքով:
- 5.1.3. Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի փակման օր է համարվում պարտատոմսերի մարման օրը (եթե նշված օրը աշխատանքային օր չէ, ապա՝ դրան հաջորդող աշխատանքային օրը), իսկ պարտատոմսերի մարման գումարները վճարվում են պարտատոմսերի սեփականատերերին ռեեստրի փակման օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- 5.1.4. Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ փակման օրվա ժամը 9.00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):
- 5.1.5. Ընկերությունը պարտավորվում է մինչև պարտատոմսերի մարման օրը Բանկում բացված հատուկ հաշվի վրա կուտակել պարտատոմսերի մարման համար անհրաժեշտ դրամական միջոցները:
- 5.1.6. Ընկերությունը մինչև պարտատոմսերի մարման օրվան հաջորդող օրը Բանկ է փոխանցում մարման գումարներ ստացող անձանց անհրաժեշտ տվյալները:
- 5.1.7. Բանկը վճարում է մարման գումարները անկանխիկ ձևով, այսինքն՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:
- 5.1.8. Պարտատոմսերի մարման գումարի վճարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում Բանկը Ընկերությանը ներկայացնում է մարման գումարների վճարման մասին հաշվետվություն:
- 5.1.9. Ընկերությունը պարտավորվում է 5.1.3 կետում նշված ժամկետում պարտավորությունները չկատարելու դեպքում յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարել մարման ենթակա գումարի 0.07%-ի չափով տույժ:

### 5.2. Պարտատոմսերի արժեկտրոնների (տոկոսագումարների) վճարումը

- 5.2.1. Պարտատոմսերի արժեկտրոնները (տոկոսագումարները) վճարվում են կիսամյակային պարբերականությամբ՝ ՀՀ դրամով, պարտատոմսի անվանական արժեքի 6 տոկոսի չափով:
- 5.2.2. Արժեկտրոնների (տոկոսագումարների) վճարման նպատակով պարտատոմսերի տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ և 18-րդ ամիսների համապատասխան օրը (իսկ եթե նշված օրը աշխատանքային օր չէ, ապա դրան հաջորդող աշխատանքային օրը) համարվում է պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի փակման օր:
- 5.2.3. Արժեկտրոնները (տոկոսագումարները) վճարվում են պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի փակման օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:



- 5.2.4. Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն փակման օրվա ժամը 09.00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):
- 5.2.5. Ընկերությունը մինչև 5.2.2. կետում նշված օրերը Բանկում բացված հատուկ հաշվի վրա կուտակում է արժեկտրոնների (տոկոսագումարների) վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցները:
- 5.2.6. Ընկերությունը մինչև 5.2.2. կետում նշված օրերին հաջորդող օրվա ընթացքում Բանկին է փոխանցում արժեկտրոններ (տոկոսագումարներ) ստացող անձանց անհրաժեշտ տվյալները:
- 5.2.7. Բանկը արժեկտրոնները (տոկոսագումարները) վճարում է անկանխիկ ձևով, այսինքն՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:
- 5.2.8. Ընկերությունը պարտավորվում է 5.2.3 կետում նշված ժամկետներում պարտավորությունները չկատարելու դեպքում յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարել մարման ենթակա գումարի 0.07%-ի չափով տույժ:
- 5.2.9. Ընկերությունը հանդիսանում է հարկային գործակալ և, ըստ այդմ, Ընկերությունը պետք է Բանկին արժեկտրոնների գումարների փոխանցմանը զուգառեռ փոխանցի պարտատոմսերի դիմաց արժեկտրոններից (տոկոսագումարներից) գործող օրենսդրությանը համապատասխան պահվող հարկային պահումները պետական բյուջե փոխանցելու համապատասխան հանձնարարականը:

## 6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 6.1. Սույն պայմաններով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ, Ընկերության այլ որոշումներով կամ նրա կողմից կնքված պայմանագրերով, ինչպես նաև պարտատոմսերի ազդագրով (որոնց վերաբերյալ տեղեկությունները կներկայացվեն պարտատոմսերի ազդագրում այնպես, որ ցանկացած ներդրող հնարավորություն կունենա ծանոթանալ և դրանք հաշվի առնել իր ներդրումային որոշման հիմքում):
- 6.2. Սույն պայմանները հանդիսանում են Ընկերության ներքին իրավական ակտ՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն:


## ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Մենք կատարել ենք «Էքսպրես Կրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ-ի 2005թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման հաշվեկշիռի, եկամուտների ու ծախսերի, դրամական միջոցների հոսքերի, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտ:

Ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Աուդիտն իրականացվել է աուդիտորական համընդանուր չափանիշներին համապատասխան: Այդ չափանիշները պահանջում են, որ մենք պլանավորենք և կատարենք աուդիտն այնպես, որպեսզի հասնենք բավարար աստիճանի համոզվածության, թե կան արդյոք էական անճշտություններ ֆինանսական հաշվետվություններում: Աուդիտն իր մեջ ընդգրկում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվերնումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվությունների գումարները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների տեղեկատվության բացահայտումները: Աուդիտը նաև ներառում է հաշվապահական հաշվառման վարման սկզբունքների գնահատումը, ինչպես նաև ֆինանսական և հաշվապահական աշխատանքների պատասխանատուների հարցումը: Մենք վստահ ենք, որ մեր կողմից իրականացված աուդիտը բավարար հիմք է մեր կարծիքի ձևավորման համար:

Մեր կարծիքով Ընկերության ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են արտացոլում Ընկերության ֆինանսական վիճակը առ 31.12.2005թ. համաձայն ՀՀ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

26 հունիսի 2006թ.



## ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք կատարել ենք «Էքսպրենս Կրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ-ի 2006թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների՝ հաշվապահական հաշվառման հաշվեկշիռի, նկամուտների ու ծախսերի, դրամական միջոցների հոսքերի, սնվածական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտ:

Ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Աուդիտն իրականացվել է աուդիտորական համընդանուր չափանիշներին համապատասխան: Այդ չափանիշները պահանջում են, որ մենք պլանավորենք և կատարենք աուդիտն այնպես, որպեսզի հասնենք բավարար աստիճանի համոզվածության, թե կան արդյոք էական անճշտություններ ֆինանսական հաշվետվություններում: Աուդիտն իր մեջ ընդգրկում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվեքննումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվությունների գումարները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների տեղեկատվության բացահայտումները: Աուդիտը նաև ներառում է հաշվապահական հաշվառման վարման սկզբունքների գնահատումը, ինչպես նաև ֆինանսական և հաշվապահական աշխատանքների պատասխանատուների հարցումը: Մենք վստահ ենք, որ մեր կողմից իրականացված աուդիտը բավարար հիմք է մեր կարծիքի ձևավորման համար:

Մեր կարծիքով Ընկերության ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են արտացոլում Ընկերության ֆինանսական վիճակը առ 31.12.2006թ.՝ համաձայն ՀՀ հաշվապահական հաշվառման Ստանդարտների:

06 հունիսի 2006թ.



Աուդիտ Սերվիս ՍՊԸ  
տնօրեն

Գոռ Դավթյան





## ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք կատարել ենք «Էքսպրենս կրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ-ի 2007թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների՝ հաշվապահական հաշվառման հաշվեկշիռի, նկամուտների ու ծախսերի, դրամական միջոցների հոսքերի, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտ:

Ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Աուդիտն իրականացվել է Աուդիտորական Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք պլանավորենք և կատարենք աուդիտն այնպես, որպեսզի հասնենք բավարար աստիճանի համոզվածության, թե կան արդյոք էական անճշտություններ ֆինանսական հաշվետվություններում: Աուդիտն իր մեջ ընդգրկում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվեքննումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվությունների գումարները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների տեղեկատվության բացահայտումները: Աուդիտը նաև ներառում է հաշվապահական հաշվառման վարման սկզբունքների գնահատումը, ինչպես նաև ֆինանսական և հաշվապահական աշխատանքների պատասխանատուների հարցումը: Մենք վստահ ենք, որ մեր կողմից իրականացված աուդիտը բավարար հիմք է մեր կարծիքի ձևավորման համար:

Մեր կարծիքով Ընկերության ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են արտացոլում Ընկերության ֆինանսական վիճակը առ 31.12 2007թ.՝ համաձայն ՀՀ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

31 մարտի 2008թ.



Աուդիտ Սերվիս ՄԳԸ  
տնօրեն

Գոռ Դավթյան



**ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՔԱՇԽՄԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N IB / 08 - 001**

ք. Երևան

«16» մայիսի 2008թ.

«Էքսպրես Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն (այսուհետև՝ ԸՆկերություն), ի դեմս Գործադիր տնօրեն Արմեն Արզումանյանի, որը գործում է ԸՆկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետև՝ Բանկ) ի դեմս Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանի, որը գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1.1. Սույն պայմանագրով Բանկի հետ համագործակցություն ձևավորելու միջոցով ԸՆկերությունը մտադիր է թողարկել և տեղաքաշխել մինչև 150,000,000 (մեկ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմսեր (այսուհետև՝ պարտատոմսեր), որի հիմնական չափանիշները կսահմանվեն ԸՆկերության իրավասու մարմնի կողմից ընդունված համապատասխան որոշմամբ՝ Բանկի և ԸՆկերության միջև համաձայնեցված կարգով:

**2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ**

- 2.1. Սույն պայմանագրի հիման վրա Բանկը պարտավորվում է ԸՆկերությանը մատուցել պարտատոմսերի թողարկման և տեղաքաշխման հետ կապված սույն պայմանագրի 2.2.-2.4. կետերում նշված ծառայությունները, իսկ ԸՆկերությունը պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:
- 2.2. Բանկը ԸՆկերությանը մատուցում է հետևյալ ծառայությունները՝
  - 2.2.1 պարտատոմսերի էական պայմանների սահմանման գործում ԸՆկերությանն անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում (այդ թվում՝ շուկայի վերլուծություն և պարտատոմսերի պահանջարկի գնահատում) և պարտատոմսերի էական պայմանները բնութագրող ամփոփ փաստաթղթի մշակում.
  - 2.2.2 պարտատոմսերի էական պայմանները բնութագրող ամփոփ փաստաթղթի վերաբերյալ ԸՆկերության համաձայնությունը ստանալու դեպքում պարտատոմսերի թողարկման գործընթացի կազմակերպում, այդ թվում՝ նաև արժեթղթերի ազդագրի նախապատրաստում.
  - 2.2.3 պարտատոմսերի ազդագրի գրանցման ընթացքում ԸՆկերության հետ համատեղ կամ լիազորագրի հիման վրա պետական լիազոր մարմնում ԸՆկերության շահերի ներկայացում,
  - 2.2.4 ԸՆկերության հետ համատեղ պարտատոմսերի տեղաքաշխման հետ կապված մարքեթինգային աշխատանքների կազմակերպում (շնորհանդեսներ, հանդիպումներ և գովազդային ակցիաներ, ազդագրի տարածման աշխատանքներ և այլն), որոնց հետ կապված ֆինանսական ծախսերը կրում է ԸՆկերությունը,
  - 2.2.5 կազմակերպում է պարտատոմսերի առաջնային տեղաքաշխումը երաշխավորված եղանակով: Պարտատոմսերի տեղաքաշխման կազմակերպման նպատակով Բանկն՝
    - ա) իրավունք ունի ձևավորել տեղաքաշխողների խումբ (սինդիկատ)՝ համապատասխան համաձայնագիր կնքելու միջոցով,
    - բ) կազմակերպում է պարտատոմսերի ազատ բաժանորդագրություն՝ իր կողմից սահմանված կարգին համապատասխան:





- զ) ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում (այսուհետև՝ ՀԿԴ) պարտատոմսերը ԸՆկերության թողարկման հաշվից գնորդների համապատասխան հաշիվներին փոխանցելու կապակցությամբ: Տեղաբաշխման ընթացքում ՀԿԴ-ի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարները կատարում է ԸՆկերությունը՝ ՀԿԴ-ի կանոններով սահմանված կարգով,
- դ) ամփոփում է տեղաբաշխման արդյունքները և նախապատրաստում տեղաբաշխման արդյունքների մասին հաշվետվություն,
- 2.2.6 պարտատոմսերի ֆոնդային բորսայում առևտրին թույլատվություն ստանալու (ցուցակման) համար օրենքով պահանջվող փաստաթղթերի, այդ թվում՝ առևտրի ազդագրի նախապատրաստում:
- 2.3. Բանկը պարտատոմսերի տեղաբաշխման և մարման շրջանակներում ԸՆկերությանը մատուցում է հաշվարկային բանկային ծառայություններ:
- 2.4. Պարտատոմսերի շրջանառության ընթացքում Բանկը կազմակերպում է պարտադիր զնանշումներ (ֆոնդային բորսայում պարտատոմսերի ցուցակվելու դեպքում՝ տվյալ բորսայի կողմից սահմանված կարգով): Բանկի կողմից կատարվող պարտադիր զնանշումները պետք է նպատակաուղղված լինեն շուկայում պարտատոմսերի իրացվելիության ապահովմանը, ինչպես նաև պարտատոմսերի կայուն և հիմնավորված գների ձևավորմանը՝ հաշվի առնելով շուկայում ձևավորված իրավիճակը:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՄՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. ԸՆկերությունն իրավունք ունի՝**

- 3.1.1 ցանկացած ժամանակ ստուգել սույն պայմանագրով նախատեսված Բանկի կողմից մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Բանկի գործունեությանը,
- 3.1.2 ողջամիտ և օրենքին չհակասող ցուցումներ տալ Բանկին՝ ծառայության մատուցման /փաստաթղթերի կազմման և դրանց բովանդակության/ վերաբերյալ,
- 3.1.3 հաշվետվություն պահանջել Բանկից ծառայության մատուցման ընթացքի վերաբերյալ,
- 3.1.4 պահանջել Բանկից կատարելու սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները:

ՍՊԵՆ  
 1 SWI  
 02574  
 1-05

**3.2. ԸՆկերությունը պարտավոր է՝**

- 3.2.1 սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Բանկին վճարել ծառայությունների դիմաց,
- 3.2.2 Բանկի պահանջով ողջամիտ ժամկետներում տրամադրել նրա կողմից մատուցվող ծառայությունների համար անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն, ինչպես նաև Բանկի պահանջով Բանկին ներկայացնել անհրաժեշտ փաստեր և հիմնավորումներ ԸՆկերության կողմից ներդրողների շրջանակներում բացահայտման ենթակա տեղեկատվության արժանահավատության և լիարժեքության վերաբերյալ,
- 3.2.3 փոխհատուցել Բանկին ներկայացված անարժանահավատ և խեղաթյուրված (բաց թողնված) տեղեկատվության բացահայտման հետևանքով Բանկի կրած վնասները, ներառյալ պետական լիազորված մարմինների կամ պարտատոմսերի ներդրողների պահանջով կրած ծախսերը,
- 3.2.4 սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար Բանկին տրամադրել լիազորություններ (լիազորագրեր),
- 3.2.5 Բանկի պահանջով կատարել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ այլ գործողություններ,
- 3.2.6 սույն պայմանագրի գործողության ընթացքում չփոփոխել թողարկված պարտատոմսերի թողարկման պայմանները և չկատարել այնպիսի գործողություններ,



որոնք կսահմանափակեն տեղաբաշխման ընթացքը կամ կվատարացնեն պարտատոմսերի տեղաբաշխման և շրջանառության պայմանները,  
 3.2.7 Բանկին տեղեկատվություն ներկայացնել Բանկ ներկայացված տեղեկությունների և/կամ փաստաթղթերի լրացումների և փոփոխությունների և դրանց բովանդակության վերաբերյալ:

**3.3. Բանկն իրավունք ունի՝**

- 3.3.1 պահանջել Ընկերությունից կատարելու սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները,
- 3.3.2 ստանալ և օգտագործել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար Ընկերության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները,
- 3.3.3 սույն պայմանագրի 2.2.-2.4. կետերով սահմանված ծառայությունների կատարման ընթացքում կազմակերպել աշխատանքային հանդիպումներ և քննարկել այնպիսի հարցեր, որոնք պահանջում են հրատապ լուծումներ:
- 3.3.4 իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստանալ վարձատրություն՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

**3.4. Բանկը պարտավոր է՝**

- 3.4.1 ձեռնամուխ լինել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցմանը՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից,
- 3.4.2 անձամբ կամ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց միջոցով և պատշաճ որակով մատուցել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները,
- 3.4.3 ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով և ողջամիտ ժամկետներում:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՒՄԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 4.1. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց Ընկերությունը Բանկին վճարում է պարտատոմսերի թողարկման՝ սույն պայմանագրի 1.1. կետով նախատեսված ծավալի (պարտատոմսերի անվանական արժեքների հանրագումարի) 1.5%-ի չափով գումար: Բանկի կողմից սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց վճարվող գումարներն, համաձայն գործող օրենսդրության, ԱԱԳ-ով չեն հարկվում:
- 4.2. Ընկերությունը 4.1. կետում նշված գումարը վճարում է հետևյալ փուլերով՝
  - ա) սույն պայմանագրի կնքման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում որպես կանխավճար վճարվում է 500,000 (հինգ հարյուր հազար) ԴԴ դրամ,
  - բ) պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո վճարվում է պարտատոմսերի ընդհանուր արժեքի 1%-ի չափով գումար,
  - գ) սույն պայմանագրի 4.1. կետով սահմանված գումարի և սույն կետի ա) և բ) ենթակետերով սահմանված գումարների տարբերության չափով գումար վճարվում է 2.2.6. կետով սահմանված ծառայությունը ավարտելուց հետո, եթե սույն պայմանագրի 4.1. կետով և սույն կետի ա) և բ) ենթակետերով սահմանված գումարների միջև առաջանա դրական տարբերություն:
- 4.3. Սույն պայմանագրի 4.2. կետով սահմանված գումարներն Ընկերությունը Բանկին վճարում է Բանկի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի հիման վրա՝ դրանց տրամադրման պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Բանկն այդ գումարները կարող է նաև անակցեպտ կարգով գանձել Բանկում բացված Ընկերության բանկային հաշվից:
- 4.4. Սույն պայմանագրի 2.2. կետով սահմանված ծառայությունները մատուցելու ավարտից հետո Կողմերը կնքում են մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման ակտ:

Յ  
 ԹԷ  
 ԽԻ



**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

- 5.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:
- 5.2. Բանկը պատասխանատվություն չի կրում, սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար, եթե դա եղել է ԸՆԿերության կողմից իր պատավորությունները չկատարելու հետևանքով:
- 5.3. Պետական լիազոր մարմնի կողմից պարտատոմսերի ազդագիրը չգրանցելու համար Բանկը պատասխանատվություն չի կրում, եթե դա եղել է Բանկից անկախ պատճառներով:
- 5.4. Սույն պայմանագրի 4.2. և 4.3. կետերով նշված ժամկետում ծառայությունների դիմաց վճարումը չկատարելու դեպքում ԸՆԿերությունը Բանկին վճարում է սույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0,2 տոկոսի չափով: Տույժի վճարումը ԸՆԿերությանը չի ազատում իր վրա դրված պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

**6. ԱՆՂԱԴԹԱՂԱՐԵԼԻ ՈՒԺ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՍՈՐ)**

- 5.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

**7. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից և գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված Կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը:
- 6.2. Սույն պայմանագրում Կողմերի համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:
- 6.3. Սույն պայմանագրի կատարման ընթացքում Կողմերի միջև առաջացած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 6.4. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ապահովել մյուս կողմից ստացված ֆինանսական, առևտրային և այլ տեղեկատվության խիստ գաղտնիությունը: Նման տեղեկատվության փոխանցումը երրորդ անձանց հնարավոր է միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:
- 6.5. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:



**ԷԷՍՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ ՓԲԸ**  
 ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐՎԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՐԱՑԻՈՆ

**ARMSWISSBANK**  
*Private & Investment Banking*

**6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՑՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**


**Բանկ**

«Էքսպրես Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ  
 Հասցե՝ ՀՀ, Երևան, Չարենցի 58, բն. 1  
 ՀՎՀՀ 00046152  
 h/h 25000130500310 ՀՀ դրամ  
 «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ  
 հեռ. 57 21 71


«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ  
 Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խանջան 13/2  
 ՀՎՀՀ 02574955  
 h/h 103002102509, ՀՀ ԿԲ  
 հեռ. 58 44 19, 52 95 93

**Գործադիր տնօրեն՝**

**Գործադիր տնօրեն՝**



**Ա.Արզումանյան**



**Չ.Մաչանյան**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ ԲԲԸ-ՈՍԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է.**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԳՐԱՊՈՐԱԿԱՅԻՆ ԱՈՍՁԱՐԿ /ՕՖԵՐՏԱ/**

«ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ՈՍ /հասցեն՝ 375010, ք. Երևան, Մեծ Եկրտյան փ. 5<sup>թ</sup>, հեռախոս՝ 520-978, 566-446/, ղեկավարվելով Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենքի 176 և 195 հոդվածների և Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի 51 հոդվածի պահանջներով բոլոր բաժնետիրական ընկերություններին առաջարկում է կնքել «Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեստորի վարման» պայմանագիր հետևյալ պայմաններով.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՐԱԿԱՆ**

1.1. Սույն պայմանագրով «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ՈՍ /այսուհետև՝ Կատարող/ պարտավորվում է սույն առաջարկը /օֆերտան/ ընդունած ընկերության /այսուհետև՝ Պատվիրատու/ համձնարարությամբ մատուցել 05.12.2006 թ. ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդի որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնադրոջ» և «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի կանոններով նախատեսված ծառայությունները /այսուհետև՝ Ծառայություններ/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցվող ծառայությունների գինը:

**2. ԿՈՐԱԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1. Կատարողը պարտավոր է.

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի կանոններով սահմանված ժամկետում և կարգով.

2.1.3. Ուժի մեջ մտնելուց առնվազն 1 ամիս առաջ Պատվիրատու տեղեկացնել «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի այն կանոնների մեջ կատարվող փոփոխությունների մասին, որոնք վերաբերվում են սույն պայմանագրով մատուցվող ծառայությունների մատուցման ժամկետներին, կարգին և գնին:

2.2. Պատվիրատուն պարտավոր է.

2.2.1. Կատարողին տեղեկացնել արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված տվյալների, անճշտությունների, լրացումների մասին և տրամադրել դրանց վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր.

2.2.2. Մատուցված Ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3.1-րդ կետում նշված գինը:

2.3. Կատարողն իրավունք ունի.

2.3.2. Հրաժարվել սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարումից, եթե Պատվիրատու կողմից խախտվել է սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջները:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի.

2.4.1. Կատարողից պահանջել սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների ժամանակին և լրիվ ծավալով մատուցում:

**3. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1. Պատվիրատուն Կատարողի կողմից մատուցված /մատուցվող/ Ծառայությունների համար վճարումները կատարում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի ծառայությունների «Սակագների մասին» կանոններով սահմանված սակագներին համապատասխան, դրանով սահմանված կարգով ու ժամկետներում:

3.2. Սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված վճարումները ուշացնելու դեպքում Պատվիրատուն վճարում է «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի ծառայությունների սակագների մասին» կանոններով և սույն պայմանագրով սահմանված տույժ ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,15 տոկոսի չափով:

3.3. Սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված տույժի չափը չի կարող լինել «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի ծառայությունների սակագների մասին» կանոններով սահմանված տույժի չափից ավելի:

**4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

4.1. Պատվիրատուն ՉՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Կատարողին տրամադրված տվյալների հավաստության համար:

4.2. Կատարողը պատասխանատվություն չի կրում ռեեստրի հետ կապված գործողությունների իրականացման հետևանքով Պատվիրատուի կամ սեփականատիրոջ կրած վնասների համար, եթե նշված գործողությունները կատարվել են վերջիններիս հանձնարարականների հիման վրա՝ ՉՀ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

4.3. Կատարողը պատասխանատվություն չի կրում մինչև սույն պայմանագրի կնքումը Պատվիրատուի Ռեեստրը վարող անձանց գործողությունների համար:

4.4. Եթե Կատարողը չի կատարել կամ ոչ պատշաճ կերպով է կատարել սույն պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները, ապա նա Պատվիրատուին և նրա սեփականատերերի առջև պատասխանատվություն է կրում նրանց պատճառված վնասների համար, եթե դրանք առաջացել են Կատարողի մեղքով:

4.5. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

**5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

5.1. Կատարողն իր պարտականությունների կատարմանը ձեռնամուխ է լինում սույն առաջարկի /օֆերտայի/ ակցեպտն ստանալու հաջորդ օրվանից:

5.2. Պայմանագիրը գործում է անժամկետ և կարող է լուծվել միայն ՉՀ քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով սահմանված կարգով:

**6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՐՏԻՈՒԹՅՈՒՆԸ**

6.1. Կատարողի մոտ սույն պայմանագրի համաձայն պահպանվող տեղեկատվությունը հանդիսանում է Պատվիրատուի սեփականությունը:

6.2. Կատարողը պարտավոր է պահպանել նշված տեղեկատվության գաղտնիությունը և դրանք իրավունք ունի տրամադրել երրորդ անձանց միայն ՉՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

6.3. Կատարողն իրավասու չէ նշված տեղեկատվությունը ծառայեցնել սեփական նպատակներին:

6.4. Կատարողն պատասխանատվություն է կրում նշված տեղեկատվության տարածման կամ օգտագործման համար՝ ՉՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

**7. ԾԱՆՈՒԹՅԱԳՐԵՐ**

7.1. Պայմանագրի կողմերի միջև ծանուցումները և հաղորդագրերը պետք է ձևակերպված լինեն գրավոր ձևով, ստորագրված սույն պայմանագրի կողմերի լիազորված անձանց կողմից և վավերացված կնիքով, հանձնված անձնապես (ուղարկողի օրինակի վրա ստացողի կողմից ստանալու վերաբերյալ նշում կատարելով), ուղարկված ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով (ստանալու վերաբերյալ ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկողին տեղյակ պահելով) կամ ուղարկված պատվիրված փոստի միջոցով:

**8. ԱՅԼ ԴՐՈՒԹՅՆԵՐ**

8.1. Սույն պայմանագրի կողմն իրավունք ունի այլ անձի փոխանցել սույն պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտավորությունները մյուս կողմի համաձայնությամբ, եթե ՉՀ օրենքներով և այլ իրավական ակտերով այլ բան սահմանված չէ:

8.2. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների վերաբերյալ կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են ՉՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

8.3. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակից՝ յուրաքանչյուր կողմի համար մեկ օրինակ:

8.4. Սույն պայմանագրին կցված հավելվածները հանդիսանում են նրա անբաժանելի մասը:

8.5. Սույն պայմանագրում նշված ՉՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի կանոններին և այլ նորմատիվ ակտերին կարող եք ծանոթանալ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի գրասենյակում, հասցեն՝ ք. Երևան, Մեծ Սկրտչյան փ. 5<sup>րդ</sup>, հեռ. 520-978, 566-446:

ԿԱՏԱՐՈՂ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի  
տնօրեն

Վ. Ստեփանյան





ԱԿՑԵՊՏ

Սույնով հայտնում ենք, որ ծանոթացել ենք ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի կանոններին և համաձայն ենք՝ «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի կողմից առաջարկված պայմաններով /օֆերտայով/ կնքել անվանական պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարման պայմանագիր :

Պատրաստ ենք ձեռնամուխ լինել պայմանագրի կատարմանը:

Հայաստանի Հանրապետություն,

ք. Երևան, փող. Քարեկայ 58, բն 1

հեռ. 57-21-37

ֆաքս 57-51-77

h/h 1510002061370100

Սպարապետյան Կ " ԲԲԸ


«Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա»  
/կազմակերպության նախագահ/

Գործադիր տնօրեն՝

Արթուր Արամյան  
(Ա.Ա.Հ.)

Ստորագրություն, Կ.Տ/

«27» 06 2006





**BTB** «ԿՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿ» ՓԲԸ  
 դրամարկղի մուտքի օրդեր ԱԻ N

Մյասնիկյան մաս. 440025/5.1  
 02/07/08 11:41:38

386451

Ձև 1

«ԷՔՄՊՐԵՍ ԿՐԵՐԻՆԵ ՈՒՎԷ» ՓԲԸ ՉԱՐՆԵՆՑԻ 58-1 ԲՆ (վճարողի անունը, ազգանունը)	դտ 1011001
ՊՈՏՏԱՏՈՒՍՅԵՐԻ ՉՐԱՆՑԱՆ ԼՊՍՏԱԿՈՎ ՊԵՏ. ՏՈՒՐԲ (գործարքի նպատակը, հիմքը)	կտ 3431071
(հարկատուի անվանումը)	հարկատուի ԳՎԳԳ 00046152
ՎԵՆՄ. ԳԱՆՃԱՆՅԵՆ (վճարը ստացողը)	ստացողի կոդը 66
ՎԵՆՄԻՐԻՆԱԿԱՆ ԳԱՆՃԱՎԵՆՈՒԿԱՆ (վճարը ստացողի բանկի անվանումը)	հաշիվը 900006016119
գումարը 50000 հաճ. վճար 200 50200 Հիսուն հազար երկու հարյուր AMD 00	արժույթի կոդը AMD 000
Վճարող _____	
Գործակալ _____	

ՎՃԱՐՈՒՄ N 229  
 02/07/08 11:41:38

Կ.Տ.